



ԳԱՆՏԱՅՐԱՅԻՆ ԹԵՄ ԴԻՕԵՍԵ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

# ԿԱՆՏԵԳՆ

ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՆՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH**

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GREGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՆՏԱՐ

*ԿԻՐԱԿԻ, 13 Հոկտեմբեր 2019*

*132*

*DIMANCHE, 13 Octobre 2019*



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ե Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին  
*ՏՕՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ*

**5<sup>ÈME</sup> DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX  
FÊTE DE NOS DOCTEURS-TRADUCTEURS**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ  
ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ (2.1-10)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (12.35-44)

**Les lectures de la Bible d'aujourd'hui**

GALATES 2.1-10 / MARC 12.35-44

Պատարագիչ եւ քարոզիչ՝  
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ. ՔՇՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ Ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

*Chef de choeur: M. Sarkis Barsemian*

*Organiste: Mme Houry Bedrossian*

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 2.1-10

Յետոյ, տասնչորս տարի ետք, դարձեալ բարձրացայ Երուսաղէմ՝ առնաբասի հետ, Տիտոսն ալ միասին առնելով: 2 Բարձրացած էի յայտնութեամբ, եւ անոնց ներկայացուցի այն աւետարանը՝ որ հեթանոսներուն մէջ կը քարոզեմ. բայց առանձին անոնց՝ որ երեւելիներ էին, որպէսզի ընդունայն չվագեմ կամ վագած չըլլամ: 3 Բայց ո՛չ իսկ ինձի հետ եղող Տիտոսը, որ Յոյն էր, արկադրուեցաւ թլփատուիլ՝ 4 գաղտնի ներս բերուած սուտ եղբայրներուն պատճառով, որոնք ներս սպրդած էին՝ լոտեսելու համար Զրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը, որպէսզի ստրուկ ընեն մեզ. 5 անոնց տեղի չտուինք՝ նոյնիսկ քիչ մը աստեն՝ ենթարկուելով, որպէսզի աւետարանին ճշմարտութիւնը ձեր մէջ մնայ: 6 Իսկ անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ - ինչ որ էին՝ ատիկա ինձի հարց չէ, քանի որ Աստուած մարդոց աչառութիւն չ'ըներ -, այնպէս կարծուածները աւելի ոչինչ հաղորդեցին ինձի. 7 հապա՛ ընդհակառակը, երբ տեսան թէ անթլփատներուն աւետարանը ինձի վստահուած է, ինչպէս Պետրոսի ալ՝ թլփատուածներունը, 8 (որովհետեւ ան որ ներգործեց Պետրոսի մէջ՝ թլփատուածներուն առաքելութեան համար, նոյնպէս ներգործեց իմ մէջս՝ հեթանոսներուն հանդէպ,) 9 ու երբ Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք սիւներ կարծուած էին, գիտակցեցան ինձի տրուած շնորհքին, իրենց աջ ձեռքը տուին ինձի ու Բառնաբասի՝ իբր նշան հաղորդակցութեան, որպէսզի մենք քարոզենք հեթանոսներուն, իսկ իրենք՝ թլփատուածներուն: 10 Միայն թէ կ'ուզէին որ աղքատները յիշենք, ինչ որ ես ալ փութաթացի ընել:

## ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 12.35-44

35 Երբ Յիսուս կը սորվեցներ տաճարին մէջ՝ ըսաւ. «Դպիրները ի՛նչպէս կ'ընեն թէ «Զրիստոս Դաւիթի որդին է»: 36 Արդարեւ ի՛նք՝ Դաւիթ՝ Սուրբ Յոգիով կ'ըսէ. «Տերը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ

պատուանդան դնեմ ուղքերուդ»»: 37 Ուրեմն ի՛նք՝ Դավիթ՝ Տեր կը կոչէ գայն. ի՛նչպէս ան կ'ըլլայ իր որդին»: Բազմութենէն շատեր հաճոյքով մտիկ կ'ընէին անոր: 38 Իր ուսուցումին մէջ կ'ըսէր անոնց. «Չգուշացէ՛ք դպիրներէն, որոնք կ'ուզեն երկայն հանդերձներով շրջիլ, կը փնտռեն բարեւները՝ հրապարակներուն վրայ, 39 առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ, եւ առաջին բազմոցները՝ ընթրիքներու մէջ. 40 որոնք կը լափեն այրիներուն տունները, ու իբր պատրուակ՝ աղօթքը կ'երկարեն: Ասոնք աւելի՛ խստութեամբ պիտի դատուին»»: 41 Յիսուս գանձանակին դիմաց նստած՝ կը նայէր թէ բազմութիւնը գանձանակին մէջ ի՛նչպէս դրամ կը ձգէ: Շատ հարուստներ՝ շատ բան ձգեցին: 42 Աղքատ այրի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաքարակիտ մը կ'ընէ: 43 Իր աշակերտները կանչելով իրեն՝ ըսաւ անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ այս աղքատ այրին՝ գանձանակը դրամ ձգողներուն բոլորէն աւելի ձգեց. 44 որովհետեւ բոլորը իրենց առատութենէն ձգեցին, բայց ան՝ իր կարօտութենէն՝ ձգեց իր ամբողջ ունեցածը, իր ամբողջ ապրուստը»:

### **GALATES 2.1-10**

1Depuis je montai encore à Jérusalem quatorze ans après, avec Barnabas, et je pris aussi avec moi Tite. 2Or j'y montai par révélation, et je conférai avec ceux [de Jérusalem] touchant l'Evangile que je prêche parmi les Gentils, même en particulier avec ceux qui sont en estime, afin qu'en quelque sorte je ne courusse, ou n'eusse couru en vain. 3Et même on n'obligea point Tite, qui était avec moi, à se faire circoncire, quoiqu'il fût Grec. 4Et ce fut à cause des faux frères qui s'étaient introduits dans [l'Eglise], et qui y étaient entrés couvertelement pour épier notre liberté, que nous avons en Jésus-Christ, afin de nous ramener dans la servitude. 5Et nous ne leur avons point cédé par aucune sorte de soumission, non pas même un moment; afin que la vérité de l'Evangile demeurât parmi vous. 6Et je ne suis en rien différent de ceux qui semblent être quelque chose, quels qu'ils aient été autrefois, (Dieu n'ayant point d'égard à l'apparence extérieure de l'homme) car ceux qui sont en estime ne m'ont rien communiqué [de plus]. 7Mais, au contraire, quand ils virent que la Prédication de l'Evangile du Prépuce m'était commise, comme celle de la Circoncision l'était à Pierre : 8(Car celui qui a opéré avec efficace par Pierre en la charge d'Apôtre envers la Circoncision, a aussi

opéré avec efficace par moi envers les Gentils.) 9Jacques, dis-je, Céphas, et Jean (qui sont estimés être les Colonnes) ayant reconnu la grâce que j'avais reçue, me donnèrent, à moi et à Barnabas, la main d'association, afin que nous allassions vers les Gentils, et qu'ils allassent eux vers ceux de la Circoncision; 10[Nous recommandant] seulement de nous souvenir des pauvres; ce que je me suis aussi étudié de faire.

### MARC 12.35-44

35Et comme Jésus enseignait dans le Temple, il prit la parole, et il dit : comment disent les Scribes que le Christ est le Fils de David?

36Car David lui-même a dit par le Saint-Esprit : le Seigneur a dit à mon Seigneur : assieds-toi à ma droite, jusqu'à ce que j'aie mis tes ennemis pour le marchepied de tes pieds.

37Puis donc que David lui-même l'appelle [son] Seigneur, comment est-il son fils? Et de grandes troupes prenaient plaisir à l'entendre.

38Il leur disait aussi en les enseignant : donnez-vous garde des Scribes, qui prennent plaisir à se promener en robes longues, et [qui aiment] les salutations dans les marchés. 39Et les premiers sièges dans les Synagogues, et les premières places dans les festins; 40Qui dévorent entièrement les maisons des veuves, même sous le prétexte de faire de longues prières. Ils en recevront une plus grande condamnation.

41Et Jésus étant assis vis-à-vis du tronc prenait garde comment le peuple mettait de l'argent au tronc. 42Et plusieurs riches y mettaient beaucoup; et une pauvre veuve vint, qui y mit deux petites pièces, qui font la quatrième partie d'un sou. 43Et [Jésus] ayant appelé ses Disciples, il leur dit : en vérité je vous dis, que cette pauvre veuve a plus mis au tronc que tous ceux qui y ont mis. 44Car tous y ont mis de leur superflu; mais celle-ci y a mis de son indigence tout ce qu'elle avait, toute sa subsistance.



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

### Ի Յիշատակ Գիւտի Նշանագրացն Հայոց եւ Թարգմանութեան Սուրբ Գրոց

Սիրելի աստուածասեր քոյրեր եւ եղբայրներ, կյսօր տերունական Կիրակի է կրկին, եւ կրկին համախմբուած ենք հարազատ եկեղեցւոյ պատերէն ներս՝ մասնակցելու Տիրոջ կողմէ աւանդուած Սուրբ Պատարագին, լսելու Աստուծոյ կենարար խօսքը, բաժնեկից ըլլալու Սուրբ Հոգիի շնորհներուն, եւ միասնաբար օրհնելու ու փառաբանելու Տէր Յիսուս Քրիստոսին՝ մեզ ընձեռած այս անգին հնարաւորութեան համար:

Յարգելիներ, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, երեկ կը նշէր եւ կը տօնախմբէր թարգմանիչ ճահվիրաներու, Սուրբ Գրքի թարգմանութեան, ինչպէս նաեւ՝ Հայ նշանագրերու գիւտին տօնը եւ որչափ ալ մենք եղելութեանց միայն հետամուտ ըլլանք, անոնց մասին խորհրդածութեանց չենք մտներ, սակայն հնար չէ բոլորովին լուռ մնալ այն մեծ նշանակութեան մասին, զոր Հայ գիրի գիւտը եւ Հայ դպրութեան կազմութիւնը ունեցան մեր ազգին եւ մեր եկեղեցւոյն պահպանութեան եւ տեւողութեան վրայ: Եթէ Հայոց եկեղեցին իրեն յատուկ գիրն ու գիրքերը չունենար, երբեք պիտի չկարենար իբր ինքնուրոյն եկեղեցի իր գոյութիւնը ապահովել, եւ պետք էր, որ ձուլուէր եւ ընկղմէր որեւէ մէկ եկեղեցւոյ մէջ, որուն լեզուն, գիրն ու գիրքը իրեն համար գործածական պիտի ըլլային: Որեւիցէ հանրային մարմին մը, հնարաւոր չէ, որ լոկ իղձերու եւ զգացումներու ուժով կարենայ իր կեանքը ապահովել: Կեանքը արտաքին եւ զգալի բան մըն է, եւ պետք է, որ արտաքին եւ զգալի ոյժ մըն ալ գայ զայն ամրապինդ պահպանելու: Հայը, որ քաղաքական կացութեան զօրութիւնը՝ հինգերորդ դարէն սկսելով կորսնցուց,

Եթէ չունենար իր գիրն ու գրականութիւնը, որ իբրեւ խարիսխ՝ յուսոյ եւ իբրեւ հիմն հաստատութեան, անոր ապաւենն եղաւ իր արեւմտեան վտանգներուն եւ իր ցրուած եւ վայրաժատին կեանքին մէջ, այսօր հազիւ թէ Հայ ազգի մը յիշատակը մնացած ըլլար, ինչպէս ի գուր կը փնտռուին Մարաց ու Պարթեւաց, Ասորեստանեայց եւ Բաբելոնացոց հետքերը այժմեան աշխարհին մէջ: Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի խորաթափանց տեսութիւնը նշմարեց քաղաքական կեանքի քայքայեալ վիճակը, նախատեսեց ազգին սպառնացուած կորուստը, մարգարեական իմն հոգևով զգաց ապագային ապահովութեան պետքը, կազմեց գիրերը, ստեղծեց գրականութիւնը, եւ փրկեց մեր ապագան:

Այսօր եթէ Հայ կայ, անելի քան Հայկայ արիւնը, Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի միտքն է անոր կեանք տուողը, եւ այդ մեծ բարիքն ալ եկեղեցւոյ ծոցէն ծնաւ: Որչափ միտքով բարձր, այնչափ հոգևով երկնային եւ սիրտով աստուածահաճոյ անձեր եղան Սուրբ Սահակ ու Սուրբ Մեսրոպ, եկեղեցականներու ընտիր խումբ մը պատեց շուրջը, եւ Ս. Սահակ-Ս.Մեսրոպ աշակերտութեան հարիւրեակը անընդհատ տեսեց Հայ եկեղեցւոյ վարդապետներու եւ երեցներու դասակարգին մէջ: Եկեղեցին էր՝ որ հովանաւորեց այս գործը, եկեղեցականներ էին՝ որ նուիրուեցան ազգաշէն մեծ գործին: Գիրն ու գիրքը եկեղեցիով, եկեղեցին ալ գիրով ու գիրքով, իրարու անբաժան փաթթուած, դարերու փորձանքներուն, Հայուն անլուր տագնապներուն, Հայութեան անըմբռնելի վտանգներուն դէմ անվտանգ ոյժ մը կազմեցին: Տասընհինգ դարերու մարտիրոսական ներդրութիւններէ ետքը, եթէ այսօր տակաւին Հայ կայ եւ Հայութիւն կայ, եթէ մտաւորական կենաց յաջողակ եւ քաղաքական կենաց ընդունակ սերունդ մը, ազգ մը ընդհանուր աշխարհի զարմանքը կը գրաւէ, զայն պետք է իրաւամբ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի անմահական գործին արդիւնքը ճանչնալ եւ խոստովանիլ: Օրինենք անոնց յիշատակը, եւ դառնանք անոնց արժանի իրաւայաջորդները:

Խոնարհում եւ տեսական օրինութիւն անոնց խնկելի յիշատակին, ինչպէս նաեւ կը հայցենք բարեխօսութիւնը թարգմանիչ ռահվիրաներու հոգեշահ փրկութեան համար. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն :

Օրինութեամբ՝  
Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան





St. Gregory Armenian Apostolic Church of Montreal

FOR OUR  
CHILDREN

Protecting our Heritage  
Building for our Future



## IMPORTANT NOTICE CHANGE of DATE

Please note , due to an unscheduled conflict with an event planned by the Embassy of the Republic of Armenia in Ottawa and out of curtesy, the reception to launch the fundraising campaign of St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, has now been **RESCHEDULED** for **WEDNESDAY OCTOBER 16, 2019, at 6:00 in the evening**, at the "Vatche Hovsepian" Hall of the church. Light refreshments will be served at the reception.

We look forward to your participation and hope that this change in dates does not cause any inconvenience.

Please advise us of your presence by calling the church office at (514)279-3066 or e-mail at: [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Sincerely yours, The Parish Council





Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի  
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպությունը՝

**ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ**



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

**ՊԱԶԱՐ**

Պատույ Հիր՝

Ազնուափայլ **Տիկին Հենիքա Սօզթս**

Շաբաթ 26 եւ Կիրակի 27 Հոկտեմբեր 2019  
Ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք  
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յանդէպ մանրամասնութեան համար հեռաձայնել  
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին

# ՆՈՒՐԱՏՈՒՌԻՐՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

## **CHURCH:**

Mr. & Mrs. Zareh Yacoubian \$155, Manoir Gouin Seniors \$105,  
Mr. & Mrs. Garo Karaartinyan \$100, Mrs. Mariam Arakilyan,  
Mrs. Anahit Khalatyan \$50, Mrs. Anna Saakian \$20.

## **SUNDAY SCHOOL:**

Mrs. Mary Doramajian \$100.

## **FOR VOW:**

Mr. Hovsep Doramajian \$100

## **BAZAAR:**

Miss Shoushan \$20

## **HOKEHANKISD:**

### **THE LATE NERSES BOYADJIAN**

Mrs. Berjuhi Sozkes \$50.

### **THE LATE KEOPRULIAN FAMILY**

Mrs. Anoush Keopruilian \$50.

### **THE LATE NOBAR AGHAZARIAN**

Mrs. Margaret Aghazarian, Dr. & Mrs. H. & Shoghig Torossian \$100.

### **THE LATE MARESHLIAN FAMILY**

Mr. & Mrs. Dave & Ardemis Fisher \$60.

### **THE LATE DAKESSIAN FAMILY**

Mr. Vicken Dakessian \$50.

### **THE LATE MARIE SAHAGUIAN**

Mr. Boghos Sahaguian \$100

## **IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

### **THE LATE ARTO TCHAKMAKTCHIAN:**

Mrs. Nairi Tchakmaktchian \$500, Mr. & Mrs. Souren & Siran  
Tchakmaktchian & Family \$200, Mr. & Mrs. Henry & Nayiri Dolabjian \$150,  
Mrs. Lucy Sumbulian, Mr. & Mrs. Khoren Dimitian, Mr. & Mrs. Mego &  
Shake Malkhassian, Mr. Krikor Tchakmaktchian & Family \$100, Mr. & Mrs.

Haygaz Papakhian & Celine Kuyumcu, Mr. & Mrs. Roupen & Anahid  
Kouyoumdjian, Mr. & Mrs. Vrej - Armen & Nazig Artinian, Mr. & Mrs.  
Richard & Elize Melkonian, Mrs. Yevkiné De Greef, Mr. & Mrs. Sarkis &  
Lilit Yacoubian & Family, Mr. & Mrs. Haroutoun & Maral Berberian, Mr. &  
Mrs. Toros Dimitian, Mr. & Mrs. Sarkis Kavoukjian \$50, Mr. Hovannes  
Bekiarian \$30, Mr. Martin Arias \$20.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանախտ  
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը  
կարքին ունի ուսուցիչներու դասաւանդելու  
գծագրութեան եւ ճատրակի յատուկ  
դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել  
քարտուղարութեան՝ (514) 279-3066  
կամ տուեալները ուղարկել հետեւեալ  
ե-հասցէին՝ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Շնորհակալութիւն

## Շարժուայ խորհրդածութիւնը

- Երբ փորձութիւնը կու գայ, կը թուի, թէ երկինքը բախուած է երկրին, եւ երբ փորձութիւնը կ'անցնի, կը պարզուի թէ՛ փոթորիկը գաւաթ մը ջուրին մէջ եր՝ մտքիդ մէջ...

Սիմէոն Աթոսացի

- Յագեցած ըլլալը երջանկութիւն մի համարեր: Ծշմարտութիւնը այն է, որ այս երկրին վրայ մենք մշտական բան մը չունինք: Ամէն ինչ ակնթարթօրէն կ'անցնի, եւ բան մը չպատկանիր մեզի, ամէն ինչ փոխառութիւն է: Փոխառութիւն է առողջութիւնը, ուժը եւ գեղեցկութիւնը:

Ս. Նիքոլայ Արք. Վելմիրովիչ



**Մեր երեխաներուն համար  
Պահպանե՛նք ժառանգութիւնը, կերտե՛նք  
ապագան**

**Սոնթրեալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ  
Առաջնորդանիստ եկեղեցին շտապ  
վերանորոգման կարիքն ունի:**

**Ճարտարապետական ուսումնասիրութիւնները  
ի յայտ բերին թէ եկեղեցւոյ արտաքին  
շաղախներն ու ենթակառոյցները անմիջական  
վերանորոգման կը կարօտին: Յառաջիկայ ինկզ  
տարիներու ընթացքին, գաղութս պետք է  
հաւաքէ բաւական նշանակալի գումար մը: Իսկ  
այս առաջին փուլը կը կարօտի \$ 250,000 ի:**

**Շտապ:**

**Եկե՛ք միասնաբար ապահովե՛նք մեր գաղութի  
ապագան:**





## POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse.

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans, nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes

restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à \$250,000 a déjà démarré.

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire.

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire.



## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

### ԱՂՕԹՔ ԳՈՐԾ ՄԿՍԵԼԷՆ ԱՌԱՋ

Մեր գործերը դո՛ւն ուղղէ, Տէ՛ր՝ մեր  
գործերը յաջողէ՛. Ամէն:

### ԱՂՕԹՔ ՃԱՇԷՆ ԱՌԱՋ

Քրիստոս Աստուած մեր, հոգեւոր օրհնութեամբ  
օրհնէ քու ծառաներուդ կերակուրները  
եւ ըմպելիները եւ հոգիի ու մարմնի առողջութիւն պարգեւէ,  
որպէսզի կրօնաւորներուն յատուկ պարկեշտութեամբ  
վայելելով մարմնաւոր նիւթերը՝ բոլոր սուրբերուդ  
հետ միասին հաղորդ դառնանք անոնց,  
յաւիտենական բարիքներուն եւ երկնքի  
արքայութեանդ:  
Եւ միշտ գոհութեամբ  
փառք տանք Բեգի Զօր, Որդիին  
եւ Ամենասուրբ Զոգիին,  
այժմ եւ միշտ յաւիտեանս  
յաւիտենից. Ամէն:

Խաղաղութեամբ ճաշակենք այս կերակուրը, որ Տէրը  
պատրաստած է մեզի համար: Օրհնեա՛լ ըլլայ Տէրը իր  
պարգեւներուն համար. Ամէն:

### PRIÈRE AVANT DE COMMENCER UN TRAVAIL

Seigneur, fais que le travail de nos mains  
soit bon et fais qu'il soit réussi. Amen.

### PRIÈRE AVANT LE REPAS

Christ notre Dieu, bénis d'une bénédiction  
spirituelle la nourriture et la boisson de tes fidèles  
et accorde-leur la santé du corps et de l'âme,  
afin qu'ayant profité spirituellement de ces bontés  
en communion avec tous tes saints, ils puissent jouir  
de tes incorruptibles bontés et du Royaume des cieux,  
et qu'ils rendent grâce en Te glorifiant avec le Père  
et ton Esprit très Saint, maintenant  
et dans l'éternité de l'éternité. Amen.

Goûtons dans la paix les nourritures  
qui nous sont offertes par le Seigneur.  
Béni soit-il pour tous ses dons! Amen.



**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**



**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

**ԿԻՐԱԿԻ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019**

Պրն. Պողոս Սահակեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իր սիրեցեալ կնոջ՝  
**ՄԱՐԻ**

**ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ**  
**(MARIE KHANAMIRIAN SAHAGUIAN)**  
Մահուան 12-րդ տարելիցին առիթով



Պրն. Արթիւր Սիմոնեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն  
պիտի կատարուի իր սիրեցեալ հարազատին՝

**ԱՐՇԱԿ ՍԻՄՈՆԵԱՆԻ**  
**(ARSHAG SIMONIAN)**  
**(մահացած Providence Rhode Island)**  
Մահուան 40-ին առիթով



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ԲՅԵՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ  
ՀԵՏ**

**ԱՄԵՆ Հինգշաբթի  
երեկոյեան՝ ժամը 7:00-ին Եկեղեցւոյ մէջ**

**Études bibliques et discussions  
avec le R.P David Margaryan**

**Chaque Jeudi à 19h00  
à l'église**

**Կը հրաւիրենք մեր սիրելի  
հաւատացեալները մասնակից ըլլալու  
Աստուածաշնչական սիւրբերուն**

**Nous invitons nos chers fidèles à participer à ces  
séances d'interprétations bibliques.**

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն  
Une collation de café et de thé est servie**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին  
ներկայութիւնը**

**Nous comptons sur votre  
participation massive**



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՏՕՆԱՅՈՅՑ  
ՅԱՌԱՋՐԻԿԱՅ ԾԱԲԹՈՒԿԱՆ  
**ՀՈԿՏԵՄԲԵՐ / OCTOBRE**

14, Երկուշաբթի – Տօն Գիւտի նշխարաց Սրբոյն Գրիգորիսի  
Աղուանից կաթողիկոսին եւ Սրբոց Հարցն  
Թաթլոյ, Վարոսի, Թումասու, Անտոնի,  
Կրօմիրիայի եւ 7 խոտաճարակացն որք  
յիննակնեայ վանսն կատարեցան:

**Lundi 14 – Fête de la découverte des Stes reliques  
du St Cathlicos Grigoris d'Aghouanie, des Sts pères Tatoul,  
Varos, Thoumas, Anton, Cronid et des sept  
végétariens du monastère de Innaguèniats.**

15, Երեքշաբթի – Տօն Սրբոց առաքելոցն՝  
Անանիայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպոսի,  
Յովհաննու, Շիղայի եւ Սիղունոսի:

**Mardi 15 – Fête des Saints apôtres, Anania,  
Mathias, Barnabas,  
Philippe, Jean, Chila et Silouane.**

16 Չորեքշաբթի – Պահք:  
Mercredi 16 – *Jeûne.*

17, Հինգշաբթի – Տօն Սրբոցն Դիոնեսիոսի Արիսպագացոյն,  
առաքելոցն Տիմոթէոսի եւ Ծիտոսի:

**Jeudi 17 – Fête de Saint Dyonisios l'Aéropagite,  
des apôtres Thimotée et Didos.**

18, Ուրբաթ – Պահք:  
Vendredi 18 – *Jeûne.*

19, Շաբաթ – Տօն Սրբոց Աւետարանչացն՝  
Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու:

**Samedi 19 – Fête des Saints évangélistes,  
Mathieu, Marc, Luc et Jean.**



Օրինութեամբ Գանատահայոց Թեմի Բարեխնամ  
Առաջնորդ Գերաշնորհ  
Տէր Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի

Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Մայր եկեղեցւոյ

«Կոմիտաս» Դպրաց Դասը  
Յունուար 2020-ին կը նախատեսէ  
կազմակերպել

**«ԿԱՏԱԿ ԵՐԳ»**

խորագրով երեկոյ մը



Յայտագիրը կը պարունակէ.

- հայկական ժողովրդական,  
սիրային եւ կատակերգի ճոխ  
երգացանկ մը,  
որ պիտի ներկայացուի

գեղարուեստական բեմադրութեամբ:

- Յայտագրի ընթացքին պիտի մատուցուի  
հայկական աւանդական ուտեստ եւ հայկական զինի:

Յայտագրին մաս կազմել փափաքողները  
մինչեւ 15 Հոկտեմբեր 2019

կրնան դիմել «Կոմիտաս» Դպրաց Դասի խմբավար  
Տիար Սարգիս Պարսեմեանին՝ [Barsemians@Gmail.com](mailto:Barsemians@Gmail.com)



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN  
ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՍՆԵՐԳՈՒԹԻՒՆ**



Սիրով կը յայտնենք, թէ  
Շաբաթ, 26 Հոկտեմբեր 2019-ի  
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան  
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի  
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր  
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները  
ներկայ գտնուելու հոգեպարար այս  
արարողութեան:

*Օրհնութեամբ՝  
Տ. Դաիթ Քինյ. Մարգարեան*





Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ Կիրակի, Սեպտեմբեր 8-ին նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը մեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացները.

1. Հայոց լեզու
2. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ
3. Մանկապատանեկան երգչախումբ
4. Շախմատ (ճատրակ)
5. Նկարչութիւն
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմուկ):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին:
- դասընթացներու համար պիտի գանձուի խորհրդանշական գումար՝ 1 փոքրիկի պարագային՝ ամիսը 15 տոլար, երկուքի պարագային՝ 25 տոլար, իսկ երեքի պարագային՝ 33 տոլար:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցեներով (e-mail)՝

[haykpetrosyan80@gmail.com](mailto:haykpetrosyan80@gmail.com) կամ [alinabezhanyan1@yahoo.com](mailto:alinabezhanyan1@yahoo.com):

**Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝**

**Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098**

